ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԱՆ ՔՈԼԵՋԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական տարվա մեկնարկը կարևոր նշանակություն և ազդեցություն ունի քոլեջի հետագա աշխատանքների, հաջողությունների և իրական ձեռքբերումների համար: Ուստի այն ճիշտ կազմակերպված և պլանավորված սկսելը քոլեջի հաջողության գրավականներից մեկն է: Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջում իրականացվել են կազմակերպադաստիարակչական հետևյալ աշխատանքները

- Ուստարվա սկզբին հստակեցված են եղել աշխատանքային բոլոր ուղղությունները, նպատակներն ու խնդիրները:
- Տնօրենի կողմից հաստատվել և գործածության մեջ են դրվել կուրսղեկական, կազմակերպադաստիարակչական աշխատանքների պլանները:
- Ուսանողները ուստարվա սկզբում իրազեկվել են ներքին կարգապահական կանոնների, իրենց իրավունքների և պարտականությունների մասին:
- Ըստ ժամանակացույցի հրավիրվել են ծնողական ժողովներ, որտեղ քննարկվել են նաև կազմակերպադաստիարակչական գործընթացին վերաբերող հարցեր:
- Ձևավորվել է ուսանողական խորհուրդ, ընտրվել է նախագահ:
- Կատարվել են տնօրենի կողմից մակագրված գրություն-հանձնարարականները և հրահանգները:
- Ուսումնական ամբողջ տարվա ընթացքում ամենօրյա գրաֆիկով դաստիարակչական աշխատանքնքներ են տարվել դժվար դաստիարակվող ուսանողների հետ:
- Հանդիպումներ, զրույց-քննարկումներ են կազմակերպվել դժվար դաստիարակվող ուսանողների ծնողների հետ:
- Տարվա ընթացքում անհրաժեշտություն է առաջացել այցելել նաև որոշ ուսանողների բնակության վայր՝ բացակայությունների պատճառները հնարավորինս վեր հանելու և լուծում տալու համար:
- Ուսումնական ամբողջ տարվա ընթացքում իրականցվել է վերահսկողություն սովորողների հաճախումների նկատմամբ:
- Իրականացվել են միջոցառումներ, որոնք նախատսված էին կազմակերպադաստիարակչական աշխատանքների պլանով:
- Պլանով նախատեսված գրեթե բոլոր աշխատանքները հիմնականում իրագործվել են:

- **Ներկայացվում է տարեկան աշխատանքային պլանի կատարողականը՝**

հմ	**Կատարման ժամանակը**	**Իրականացված աշխատանքները**
1	01.09.2023-Սեպտեմբերի 1, գիտելիքի օր	Ապահովվել է 2023-2024 ուսումնական տարվա հետաքրքիր ու բովանդակալից սկզբը, ուսանողներին դիմավորման արարողությունը:
2	05.09.2023 -15.09. 2023	Ապահովվել է ուսանողների տեղեկացվածությունը՝ վեր հանելով նրանց կարիքները:
3	18.09.2023	Գումարվել է ուսանողական խորհրդի նիստ, կատարվել է ուսխորհրդի նախագահի ընտրություն, անդամների հստակեցում, աշխատանքների բաշխում:
4	21.09.2023	Նախաձեռնվել է Անկախության օրվան նվիրված զրույց-քննարկումներ՝ քոլեջի զինղեկի մասնակցությամբ:

5	05.09.2023	Կազմակերպվել է միջոցառում-ցերեկույթ՝ նվիրված Ուսուցչի օրվան:
6	27.10.2023-07.11.2023	Հայտարարվել է «Պոեզիայի օրեր» քոլեջում, ասմունքել են մեր ուսանողները, նկարահանվել տեսանյութ, որը հրապարակվել է քոլեջի ֆեյսբուքյան էջում:
7	28.11.2023--04.12.2023	Ապահովվել է ուսանողների այցը գրադարաններ և պատմամշակութային վայրեր՝ դասախոսների և գրադարանավարի ուղեկցությամբ:
8	15.12.2023-28.12.2023	Տոնական ձևավորումներ՝ համապատասխան տրամադրություն ստեղծելու համար:
9	21.02.2024	Կազմակերպվել է Մայրենի լեզվի օրվան նվիրված ցերեկույթ, ինչպես նաև տեսահոլովակի նկարհանում՝ թեմայի շրջանակներում:
10	05.03.2024	Այց Եռաբլուր:
11	01.03.2024.-10.04.2024	Ֆիզկուլտուրայի դասախոսների նախաձեռնությամբ կազմակերպվել են սպորտային հանդիպումներ մայրաքաղաքի տարբեր քոլեջների ուսանողների հետ՝ միջքոլեջային հարաբերությունները ամրապնդելու նպատակով:
12	09.04.2024	Կազմակերպվել է ցերեկույթ՝ նվիրված կանանց միամսյակին:
13	01.05.2023	Կազմակերպվեց ուսանողների նկարների ցուցահանդես՝ նվիրված աշխատավորի օրվան:
14	03.05.2024	Ուսանողները այցելել են ՀՀ Ազգային ժողով, մանակցել նիստին, հանդիպել են պատգամավորների հետ:
15	23.05.2024	«Գրականությունից մինչև հեռուստատեսություն» խորագրի շրջանակներում ուսանողները հանդիպեցին գրող, սցենարիստ Անի Մաղաքյանի հետ:
16	21.05.2024	Իրականացվել է միջոցառում-ցերեկույթ՝ նվիրված մայիսյան հերոսամարտերին:
17	27.05.2024-05.06.2024	Ներառական խնդիրներ ունեցող ուսանողների և նրանց ծնողների հետ հանդիպումներ ունեցան ՏՄԱԿ-ի սոցիալական աշխատակիցները, կատարվեց կարիքների վերհանում և գնահատում:
18	20.06.2023-20-07.2023	Կազմակերպվել են էքսկուրսիաներ: Դիպլոմների հանդիսավոր հանձնման արարողության համար կազմակերպչական աշխատանքները ընթացքի մեջ են:

Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն՝
Նառա Հակոբյան_____